Ազգ
Azg
armenian daily
19 ՅՈՒՆՈՒԱՐ 2001 ՈՒՐԲԱԹ 9 (2213)

# «Հայկական բանաձեւը» կրկին դրվելու է ԱՄՆ կոնգրեսի քննարկմանը

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սպառնալիքների եւ շանտաժի քաղաքականությունը, որին հաճախ դիմում է Անկարան՝ «Հայոց բանաձեւի» ընդունումը տապալելու համար, ըստ էության, սպառել է իրեն: Դա ակնհայտ դարձավ դեռ 2000 թ., երբ Իտալիայի խորհրդարանը, Ֆրանսիայի Սենատը, Եվրախորհրդարանը եւ Վատիկանը պաշտոնապես ճանաչեցին հայերի ցեղասպանությունը, տեղեկացնում է ռուսաստանյան էլեկտրոնային «gazetasng»-ն: «Հայկական հարցը» անկասկած նոր քննարկումների առարկա է դառնալու նաեւ ամերիկյան օրենսդիրների համար: «Ըստ ամերիկացի կոնգրեսականների եւ հենց թուրք քաղաքագետների, ԱՄՆ նախագահի պահանջով Ներկայացուցիչների պալատի օրակարգից վերջին պահին հանված «Հայկական բանաձեւը» կրկին դրվելու է Կոնգրեսի քննարկմանը: Այս անգամ Վաշինգտոնի վարչակազմի կողմից արգելակման մեխանիզմների օգտագործումը կարող է անարդյունավետ մնալ, ուստի եւ ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ընդունման «սպառնալիքը» ավելի ու ավելի ակնհայտ է դառնում», նշում է ռուսաստանյան լրատվամիջոցը:

ՓԱՐԻԶ

# 21-րդ դարում Ֆրանսիայի առաջին օրենքը դարձավ 1915 թ. Հայոց ցեղասպանության միահամուռ ճանաչումը



ԱՐՄԻՆԵ ԱԶԻԶՅԱՆ-ԷԼԲԱԿՅԱՆ
Փարիզ

20-րդ դարի սկզբի ցեղասպանությունը Ֆրանսիան ճանաչեց 21-րդ դարի հենց սկզբին: Ճանաչման ընթացքը գրեթե մեկ տարի տեւեց:

Հունվարի 18-ի առավոտյան ժամը 9-ին ֆրանսահայերը, ժողովրդավարներն ու հանրապետականները, իրավապաշտպան կազմակերպությունների, արհմիությունների, քաղաքական կուսակցությունների եւ համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչները հոծ խմբերով հավաքվել էին Ֆրանսիայի Ազգային ժողովի առջեւ՝ աջակցելու Հայոց ցեղասպանության օրենքի վերջնական ընդունմանը:

Իրոք, այս անգամ այդ գեղեցիկ նախաձեռնության հեղինակը Ազգային ժողովի Ֆրանսիայի ժողովրդավարության միություն (UDF) խմբակցությունն էր, որն իր խորհրդարանական «պատուհանի» առիթն օգտագործեց նոյեմբերի 8-ին Սենատում ճնշող մեծամասնությամբ արդեն ընդունված օրինագիծն օրակարգ մտցնելու համար:

Ազգային ժողովի դահլիճը լեփ-լեցուն էր ֆրանսիական, օտարերկրյա, հայկական եւ, իհարկե, թուրքական լրատվամիջոցների ներկայացուցիչներով: Ինչ վերաբերում է պատգամավորներին, նրանք 51-ն էին: Ելույթ ունեցան 17 անձինք՝ ֆրանսիական բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Ելույթներն աչքի էին ընկնում համարձակությամբ, զուրկ էին որեւէ ազդեցությունից եւ երկդիմությունից: Բոլոր պատգամավորները սկզբում շնորհավորեցին Ֆրանսիայի ժողովրդավարության միություն (UDF) խմբին եւ զեկուցող Ֆրանսուա Ռոշբլուանին:

Տես ➧ էջ 3

ՓԵՏՐՎԱՐԻՆ

# Եվրամիության ղեկավարությունը կայցելի Հայաստան

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՄՆԱՐՔ: Փետրվարի երրորդ տասնօրյակում Եվրամիության բարձրաստիճան պատվիրակությունը կայցելի Հայաստան: 11 մարդուց բաղկացած պատվիրակությունը կգլխավորի Շվեդիայի արտգործնախարար տիկին Աննա Լինդխը: Եվրամիության ներկայացուցիչների թվում կլինեն Խավիեր Սոլանան, որը ներկայումս արտաքին քաղաքականության հարցերով Եվրամիության հանձնակատարի պաշտոնն է զբաղեցնում, եւ Քրիս Պատեն՝ անվտանգության հարցերով Եվրամիության հանձնակատարը: Ինչպես հայտնի է դարձել իրազեկ դիվանագիտական աղբյուրներից, Եվրամիության պատվիրակության այցը տարածաշրջանային բնույթ կկրի: ԵՄ ղեկավարությունը կայցելի նաեւ Հարավային Կովկասի այլ երկրներ:

Երեւանում ԵՄ բարձրագույն ղեկավարությանը կընդունի Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նախատեսվում է հանդիպումների անցկացում նաեւ այլ պաշտոնական անձանց հետ: Բանակցությունների ընթացքում կողմերը կքննարկեն մի շարք քաղաքական հարցեր, ինչպես նաեւ Հարավային Կովկասի տարածաշրջանում կայունությանն ու անվտանգությանը, Հայաստանի եւ Եվրամիության միջեւ երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման եւ խորացման հեռանկարներին առնչվող հարցեր:

Հիշեցնենք, որ անցյալ տարվա դեկտեմբերի 26-ին կայացած իր վերջին մամլո ասուլիսի ժամանակ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը հայտարարել էր, որ, իր կարծիքով, Եվրամիությանն անհրաժեշտ է կոնկրետացնել իր քաղաքականությունը Հարավային Կովկասի երկրների նկատմամբ: Մեզ հարկավոր է իմանալ, պատրաստ է արդյոք Եվրամիության ղեկավարությունը Հայաստանն ապագայում տեսնել տվյալ եվրոպական կառույցի կազմում, ընդգծել էր նախարարը:

# Թուրքիան դատապարտում է Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշումը

## *Անկարայում ԱՄՆ-ի դեսպանը միանում է նրան*

Ինչպես եւ սպասվում էր, Թուրքիայի պաշտոնական առաջին հակազդեցությունը Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած որոշման նկատմամբ եղավ զուսպ, բայց շատ խիստ: Առայժմ:

Որոշումն ընդունելու պահին Թուրքիայի նախարարաց խորհուրդն արդեն 2,5 ժամ նիստ էր գումարում: Նիստի ավարտին լրագրողներին ներկայացավ պետնախարար եւ կառավարության խոսնակ Ռուշտու Քյազըմ Յուջելենը եւ կարդաց պաշտոնական հայտարարությունը, ըստ որի «Թուրքիա-Ֆրանսիա հարաբերությունների վրա, այսպես կոչված Հայոց ցեղասպանության օրինագծի ընդունման անկանխատեսելի հետեւանքների ողջ պատասխանատվությունն ընկնում է Ֆրանսիայի վրա»:

Ավելի ուշ հայտարարությամբ հանդես եկավ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի նախագահ Օմեր Իզգին, որ դատապարտեց Ֆրանսիայի Ազգային ժողովին ցեղասպանության օրինագիծն ընդունելու կապակցությամբ, որից հետո թուրքական պետական TRT-1 հեռուստատեսությունը տեղեկացրեց, որ Անկարայում Մ. Նահանգների դեսպան Ռոբերտ Փիրսոնը շտապել է Օմեր Իզգինի մոտ եւ իր երկրի համերաշխությունն է հայտնել Ազգային մեծ ժողովի նախագահին:

Նույն հեռուստակայանի հաղորդմամբ, Թուրքիան շտապ ետ է կանչել Փարիզում իր արտակարգ եւ լիազոր դեսպան Սոնմեզ Քոքսալին՝ «խորհրդակցելու նպատակով»: Հեռուստակայանն այնուհետեւ բացատրեց, որ Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշումն այժմ ենթակա է նախագահ Ժակ Շիրակի վավերացմանը: Եթե վերջինս այն չանի, ապա որոշմանն օրենքի ուժ տալու համար Ազգային ժողովը ստիպված կլինի կրկին քվեարկել բանաձեւը, որի դեպքում, անհամաձայնության պարագայում, Ժակ Շիրակին կմնա դիմել Սահմանադրական դատարան:

«TRT-1»-ը տեղեկացրեց նաեւ, որ Փարիզում անկնալվում է թուրքերի բողոքի ցույց:

# Նյու Յորքում ձերբակալվեց Պավել Բորոդինը

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունվարի 17-ի երեկոյան Նյու Յորքի Քենեդու անվան միջազգային օդանավակայանում ձերբակալվել է Ռուսաստանի նախկին նախագահի գործերի կառավարիչ, ներկայումս՝ Ռուսաստան-Բելառուս միության պետքարտուղար Պավել Բորոդինը: Բորոդինը Նյու Յորք էր ժամանել մասնակցելու նախագահ Ջորջ Բուշի պաշտոնակալության արարողությանը: Ինչպես հաղորդում է BBC-ն, ձերբակալությունը կատարվել է Շվեյցարիայի դատախազության դատական հրահանգին համապատասխան, որը հետաքննում է շվեյցարական «Մաբետեքս» շինարարական ֆիրմայի գործը, որը, ինչպես հաստատվում է, կաշառքներ է տվել, որպեսզի ստանա Կրեմլում աշխատանքի իրականացման պայմանագիրը: Այսօր Պավել Բորոդինի գործը լսվելու է Նյու Յորքի դատարանում: ՌԴ արտաքին գործերի նախարար Իգոր Իվանովը բողոք է հայտնել ԱՄՆ դեսպան Ջեյմս Քոլինզին Բորոդինի ձերբակալության առնչությամբ եւ պահանջել անհապաղ ազատել նրան: Մինչդեռ Շվեյցարիայի գլխավոր դատախազությունը հայտարարել է, որ պահանջելու է ձերբակալվածին հանձնել՝ նրա դեմ հարուցված փողերի լվացման մեղադրանքի կապակցությամբ:



# Թուրքիան պատրաստված է Հայաստանի հետ դիվանագիտական շփումներ հաստատելու պատրաստակամություն հայտնել

## *Անկախ նրանից, թե դեռ քանի երկիր կճանաչի Հայոց ցեղասպանությունը*

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Թուրքական մամուլը հունվարի 18-ին լայնորեն արձագանքել է Ֆրանսիայի Ազգային ժողովում Հայոց ցեղասպանության օրինագծի քննարկմանը՝ դրա հավանական հաստատումը ուղղակիորեն կապելով հայ-թուրքական հարաբերությունների հետ: Ցեղասպանության հարցի արծարծումը տարբեր երկրների խորհրդարաններում, մեր կարծիքով, խոչընդոտ չէ եւ չի կարող լինել Երեւան-Անկարա շփումներում: Հակառակ դեպքում, 1991-98 թթ., երբ Հայաստանի իշխանությունները բացարձակապես չէին հիշում Ցեղասպանությունը, ավելին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի խոսքերով՝ դրանում մեղադրում էին բոլորին, բացի թուրքական իշխանություններից, Հայաստան-Թուրքիա եթե ոչ դիվանագիտական հարաբերություններ, ապա դիվանագիտական շփումներ կհաստատվեին: Եվ եթե այն տարիներին հայ-թուրքական շփումներում լարվածության որոշակի նշաններ էին զգացվում, ապա մեծապես շնորհիվ ժիրայր Լիպարիտյանի «ջանքերի»:

Հարավային Կովկասում հաստատվելու եւ տարածաշրջանային խնդիրների հոլովույթից դուրս չմնալու պայքար է ծավալվել Ռուսաստանի, Իրանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ ԵՄ-ի միջեւ: Ճիշտ է, Թուրքիան թույլ պետություն չէ, սակայն ԱՄՆ-ի բացահայտ օժանդակությունը նրան մղում են առաջնային պլան: Չէ՞ որ Վաշինգտոնը Հարավային Կովկասում հաստատվելու եւ Ռուսաստանի ու Իրանի ազդեցությանը դիմակայելու նպատակով «խաղագումար» է դրել հենց Անկարայի վրա: Անհնար է տարածաշրջանում հաստատվել՝ հարաբերություններ չունենալով Հարավային Կովկասում Հայաստանի հետ, որը, ուշադրություն դարձնենք, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի հակառակորդներ Ռուսաստանի եւ Իրանի հետ ունի ռազմավարական կապեր: Այսինքն, Թուրքիային այլ բան չի մնում, քան ժամանակ առ ժամանակ Հայաստանի հետ դիվանագիտական շփումներ հաստատելու պատրաստակամություն հայտնել՝ հեզորեն կատարելով իր պարտականություններից մեկը:

Տես ➧ էջ 3

